Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19) բուժաշխատող՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնագիտական գործունեություն իրականացնող ու դրա համար համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում, շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր (այսուհետ՝ **ՇՄԶ հավաստագիր**)՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա ունեցող, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ.».

2) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) ավագ բուժաշխատող՝ առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն ունի համապատասխան բարձրագույն կրթություն ու բժշկի որակավորում, մասնագիտացում, օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է ՇՄԶ հավաստագիր և անհատական լիցենզիա, ինչպես նաև դիպլոմավորված մասնագետ, որն ունի համապատասխան հետբուհական մասնագիտական կրթություն, ՇՄԶ հավաստագիր (բացառությամբ առաջին անգամ մասնագիտական գործունեություն իրականացնող՝ համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում և մասնագիտացում ունեցող անձի) և անհատական լիցենզիա կամ մինչև 2014 թվականը (ներառյալ) 10 տարվա անընդմեջ լաբորատոր ախտորոշման ոլորտի

աշխատանքային փորձ և վերջին 5 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում ՇՄՋ հավաստագիր և անհատական լիցենզիա ունեցող մասնագետ.».

3) 21-րդ կետում «որն ունի» բառերից հետո լրացնել «առնվազն» բառը, իսկ «մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրեր» բառերը փոխարինել «առաջին անգամ մասնագիտական գործունեության կամ ՇՄՋ հավաստագիր» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը 22-րդ կետից հետո լրացնել նոր՝ 22.1-ին և 22.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«22.1) անհատական լիցենզիա՝ ավագ բուժաշխատողի՝ առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն.

22.2) անցումային անհատական լիցենզիա՝ կլինիկական օրդինատուրայում (կլինիկական ռեզիդենտուրայում), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատությունում ուսումնառող անձանց բարձրագույն բժշկական կրթության հենքի վրա ոչ ինքնուրույն, հսկողության ներքո լիազոր մարմնի կողմից սահմանված ծավալով մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն.».

2) 1-ին մասի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«37) ՇՄՋ հավաստագիր՝ ավագ բուժաշխատողի անհատական լիցենզիայի ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ, սույն օրենքով նախատեսված դեպքերում, շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ (այսուհետ՝ ՇՄՋ կրեդիտներ) հավաքելու և վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացնելու փաստը հավաստող փաստաթուղթ, իսկ միջին բուժաշխատողների համար՝ ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվություն, որը տրվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում ՇՄՋ կրեդիտներ հավաքելու և վերջին հինգ տարվա

ընթացքում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացնելու դեպքում.»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում «ավագ և միջին բուժաշխատողների» բառերը փոխարինել «ավագ, միջին բուժաշխատողների և կլինիկական օրդինատորների (կլինիկական ռեզիդենտների)» բառերով:

Հոդված 4. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) դադարեցնել անհատական մասնագիտական գործունեության իրականացումը, օրենքով սահմանված կարգով լուծել անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա չունեցող անձի, ինչպես նաև միջին բուժաշխատող հանդիսացող և առաջին անգամ մասնագիտական գործունեության կամ ՇՄՋ հավաստագիր չունեցող անձի հետ կնքված աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիրը կամ ազատել նրան զբաղեցրած պաշտոնից:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածի մասում «, բժշկական և ոչ բժշկական մասնագիտությունների, ինչպես նաև նեղ մասնագիտությունների ցանկերը» բառերը փոխարինել «հիմնական մասնագիտությունների, նեղ և լրացուցիչ մասնագիտացումների կազմակերպման սկզբունքները և դրանց ցանկերը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից հետո լրացնել նոր 8.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1) ավագ բուժաշխատողը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ունենալ անհատական լիցենզիա, իսկ կլինիկական օրդինատորը (կլինիկական ռեզիդենտը), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատությունում ուսումնառող անձը՝ անցումային անհատական լիցենզիա.»:

Հոդված 7. Օրենքի 34-րդ հոդվածի՝

1) 7-րդ մասում «32-րդ» բառը փոխարինել «33-րդ» բառով.

2) 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. ՄԳՀԱԿ-ն իրականացնում է՝

1) բուժաշխատողների ռեգիստրի վարումը.

2) առաջին անգամ մասնագիտական գործունեության և և ՇՄՋ հավաստագրերի տրամադրումը.

3) շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կրեդիտավորումը.

4) ՇՄՋ հավաստագրման գործընթացի վերաբերյալ մշտադիտարկումը.

5) սույն օրենքով նախատեսված դեպքերում ՇՄՋ հավաստագիր ստանալու նպատակով թեստավորման կազմակերպման և իրականացման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

6) անցումային անհատական լիցենզիայի և անհատական լիցենզիայի տրամադրման նպատակով իրականացվող կենտրոնացված քննության կազմակերպման և իրականացման նախապատրաստական աշխատանքների իրականացումը:».

3) 15-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«5. Առողջապահության ոլորտի հետբուհական մասնագիտական կրթության և լրացուցիչ մասնագիտացման տեսակները, իրականացման կարգը, պայմանները և վերջնարդյունքները սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքը 6-րդ գլխից հետո լրացնել նոր՝ 6.1-ին գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 6.1

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 35.1. Բուժաշխատողի անհատական լիցենզավորման կազմակերպման գործընթացը

1. Առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն ինքնուրույն իրականացնելու համար ավագ բուժաշխատողները, որպես ֆիզիկական անձինք, պետք է ստանան անհատական լիցենզիա՝ անկախ նրանց աշխատանքի վայրից, իսկ

կլինիկական օրդինատորները (կլինիկական ռեզիդենտները), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատությունում ուսումնառող անձինք՝ անցումային անհատական լիցենզիա:

2. Անհատական լիցենզիան և անցումային անհատական լիցենզիան տրամադրվում է կենտրոնացված քննության հանձնման արդյունքում:

3. Կենտրոնացված քննության կազմակերպման և իրականացման կարգը՝ ըստ առողջապահության բնագավառի մասնագիտությունների առանձնահատկությունների, կենտրոնացված քննության արդյունքների բողոքարկման կարգը, կենտրոնացված քննություն իրականացնող լիցենզավորող հանձնաժողովի ձևավորման կարգը, աշխատակարգը և անհատական կազմը սահմանում է լիազոր մարմինը:

4. Անհատական լիցենզիա ստանալու համար կենտրոնացված քննությունն իրականացվում է հետբուհական կրթական ծրագրերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո՝ առանձին փուլով, լիազոր մարմնի կողմից ձևավորված լիցենզավորող հանձնաժողովի կողմից:

5. Կենտրոնացված քննությունն իրականացվում է մասնագիտական հանձնաժողովների կողմից կազմված տեսական գիտելիքների և գործնական հմտությունների վերաբերյալ առաջադրանքների հիման վրա: Մասնագիտական հանձնաժողովների ձևավորման կարգը, անհատական կազմը և աշխատակարգը սահմանում է լիազոր մարմինը:

6. Կենտրոնացված քննությունը կազմակերպվում է ըստ առողջապահության բնագավառի հիմնական մասնագիտությունների:

7. Անհատական լիցենզիան տրամադրվում է առողջապահության բնագավառի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտած, անհատական լիցենզիա ստանալու համար կենտրոնացված քննությունը հանձնած անձանց:

8. Անցումային անհատական լիցենզիան տրամադրվում է առողջապահության բնագավառի բարձրագույն մասնագիտական կրթության փաստը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հիման վրա՝ անցումային անհատական լիցենզիա ստանալու համար կազմակերպվող կենտրոնացված քննության հանձնման արդյունքում կլինիկական օրդինատուրա (կլինիկական ռեզիդենտուրա) կամ ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատություն ընդունված անձանց՝ ուսումնառությունն սկսելու պահից:

9. Անհատական լիցենզիա և անցումային անհատական լիցենզիա տալու, դրա տրամադրումը մերժելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ եզրակացությունները տրվում են լիցենզավորող հանձնաժողովի կողմից, որի կազմում լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կարող են ներգրավվել նաև միջգերատեսչական ներկայացուցիչներ:

10. Լիցենզավորող հանձնաժողովը իրավասու է քննելու նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բուժաշխատողի գործունեության որակի վերաբերյալ բողոքները՝ լիազոր մարմնի հրամաններով սահմանված որակի պահանջներին համապատասխան: Բողոք ներկայացնելու և այն քննելու կարգը սահմանում է լիազոր մարմիը:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված բողոքների քննության արդյունքում լիցենզավորող հանձնաժողովը կարող է՝

1) մեկ տարվա ընթացքում առաջին անգամ բուժաշխատողի կողմից խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը մեկ ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ.

2) մեկ տարվա ընթացքում բուժաշխատողի կողմից կրկին խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը երեք ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերում լիցենզավորող հանձնաժողովի առաջարկությունն ստանալուց հետո, լիազոր մարմնի ղեկավարը հնգօրյա ժամկետում որոշում է կայացնում տվյալ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ:

13. Անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիա ստանալու հայտի ձևերը, անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիայի ձևերը, դրանց տրամադրումը մերժելու հիմքերը և կարգը, տրամադրման և գործողության ժամկետի երկարաձգման կարգը սահմանում է Կառավարությունը:

14. Առողջապահության բնագավառի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող այն ուսումնական հաստատությունները, որոնց շրջանավարտների 70 և ավելի տոկոսը կենտրոնացված քննությունը հանձնելու և դրա արդյունքների հիման վրա անհատական կամ անցումային լիցենզիա չեն ստանում, զրկվում են տվյալ տարվա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ֆինանսավորման հնարավորությունից:

15. Անհատական լիցենզիան և անցումային անհատական լիցենզիան տրամադրում է լիազոր մարմինը՝ էլեկտրոնային եղանակով:

16. Անհատական լիցենզիան տրվում է հինգ տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:

17. Սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 3 ամիս առաջ ավագ բուժաշխատողը, դիմում է հաջորդ հինգ տարիների համար անհատական լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով:

18. Անհատական լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է, եթե բուժաշխատողը անցել է ՇՄՋ հավաստագրում և առկա չեն վերջինիս անհատական լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ օրենքով սահմանված հիմքեր:

19. Անցումային անհատական լիցենզիան տրվում է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունում ուսում ստանալու ժամանակահատվածի համար:

20. Կլինիկական օրդինատորները (կլինիկական ռեզիդենտները), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատությունում ուսումնառող անձինք իրավունք ունեն իրականացնելու բժշկական օգնություն և սպասարկում՝ միայն լիազոր մարմնի կողմից սահմանված ծավալով:

21. Ռազմաբժշկական ուսումնական հաստատություն կամ պետական լիազոր մարմնի պատվերով բարձրագույն բժշկական ուսումնական հաստատություններ ավարտած և սահմանված կարգով անհատական լիցենզա չստանալու հիմքով պայմանագրային զինվորական ծառայությունից արձակված ավագ բուժաշխատողին սահմանված կարգով անհատական լիցենզիա կարող է տրամադրվել պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու օրվանից հինգ տարի հետո:

22. Անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիայի տրամադրման համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով:

23. Անցումային անհատական լիցենզիայի և անհատական լիցենզիայի տրամադրման, դրանց գործողության կասեցման կամ դադարեցման, անհատական լիցենզիայի գործողության երկարաձգման վերաբերյալ տվյալները մուտքագրվում են բուժաշխատողների ռեգիստր:

24. Անձը կարող է ունենալ մեկից ավելի գործող անհատական լիցենզիա, եթե բավարարում է սույն օրենքով սահմանված պահանջները և դրանց հիման վրա մասնագիտական գործունեություն է իրականացնում:

Հոդված 35.2. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողության կասեցումը

1. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը կասեցվում է՝

1) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետում հավաստագրում չանցնելու դեպքում.

2) անձի՝ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

3) սույն օրենքի 35.1-ին հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերում.

4) սույն օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.

5) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի վերացման դեպքում բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը վերականգնվում է լիազոր մարմնի կողմից՝ այն բուժաշխատողի դիմումի հիման վրա, որի անհատական լիցենզիայի գործողությունը կասեցվել էր:

3. Անհատական լիցենզիայի վերականգնման կամ վերականգնումը մերժելու վերաբերյալ լիազոր մարմնի հրամանն ընդունվում է բուժաշխատողի դիմումն ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը վերականգնելը մերժելու մասին լիազոր մարմնի հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով կամ դատական կարգով:

Հոդված 35.3. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողության դադարեցումը

1. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) անձը լիցենզիա է ստացել օրենքի պահանջների խախտմամբ.

2) անձը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձն ազատազրկման է դատապարտվել և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ .

4) անձը մահացել է, կամ ուժի մեջ է մտել նրան մահացած ճանաչելու մասին դատարանի ակտը.

5) անձը ձեռք է բերել Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված բժշկական մասնագիտական գործունեությանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն.

6) զինվորական ծառայության մեջ գտնվող անձը սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հավաստագրում չանցնելու միջոցով անհատական լիցենզիայի գործողության կասեցման կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքված պայմանագրի վաղաժամկետ դադարեցման (խախտման) հիմքով արձակվել է պահեսազոր.

7) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով անհատական լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր անհատական լիցենզիա ստանալու համար դիմել միայն անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո:

3. Անհատական լիցենզիայի դադարեցման համար սույն հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված հիմքերի վերացման դեպքում անձն իրավունք ունի այդ հիմքերի վերացումից հետո դիմել անհատական լիցենզիա ստանալու համար՝ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված կենտրոնացված քննություն հանձնելով:

Հոդված 35.4. Անցումային անհատական լիցենզիայի գործողության կասեցումը

1. Անցումային անհատական լիցենզիայի գործողությունը կասեցվում է՝

1) սույն օրենքի 35.1-ին հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերում.

2) անձի՝ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

3) սույն օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը վերանալուց հետո անցումային անհատական լիցենզիա ստացած անձի դիմումի հիման վրա անցումային անհատական լիցենզիայի գործողությունը վերականգնվում է լիազոր մարմնի կողմից:

3. Անցումային անհատական լիցենզիայի վերականգնման կամ վերականգնումը մերժելու վերաբերյալ լիազոր մարմնի հրամանն ընդունվում է անցումային

անհատական լիցենզիա ստացած անձի դիմումն ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Անցումային անհատական լիցենզիայի գործողությունը վերականգնելը մերժելու մասին լիազոր մարմնի հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով կամ դատական կարգով:

Հոդված 35.5. Անցումային անհատական լիցենզիայի գործողության դադարեցումը

1. Անցումային անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցվում է՝

1) կլինիկական օրդինատուրայում (կլինիկական ռեզիդենտուրայում), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատությունում ուսումը դադարեցնելու դեպքում.

2) անձի՝ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

3) եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձն ազատազրկման է դատապարտվել և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ .

4) եթե անձը մահացել է, կամ ուժի մեջ է մտել նրան մահացած ճանաչելու մասին դատարանի ակտը.

5) անձը ձեռք է բերել Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված բժշկական մասնագիտական գործունեությանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն.

6) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի վերացման և ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու դեպքում անձն իրավունք ունի այդ հիմքերի վերացումից հետո դիմել անցումային անհատական լիցենզիա ստանալու համար:»:

Հոդված 10. Օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) օրենքով քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հաստատման դեպքում՝

ա. լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն մեկ տարվա ընթացքում առաջին անգամ մասնագիտական էթիկայի կանոնի խախտում կատարած բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը մեկ ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը.

բ. մեկ տարվա ընթացքում բուժաշխատողի կողմից կրկին մասնագիտական էթիկայի կանոնի խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը երեք ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը:»:

Հոդված 11. Օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Էթիկայի հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումների ընդունման հիման վրա լիազոր մարմնի ղեկավարը որոշում է կայացնում տվյալ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ:»:

Հոդված 12. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ՝

1) 1-ին հոդվածի 1-ին մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից.

2) 1-ին հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.

3) 2-րդ հոդվածի 1-ին մասի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 1-ից.

4) 2-րդ հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.

5) 4-րդ, 6-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, որոնք անցումային անհատական լիցենզիայի մասով ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից, իսկ անհատական լիցենզիայի մասով՝ 2027 թվականի հունվարի 1-ից.

6) 8-րդ և 9-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունիսի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը:

3. Անհատական լիցենզավորման գործընթացի մեկնարկը սկսվում է 2025 թվականի օգոստոսի 1-ից՝ լիազոր մարմնի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

4. Սույն օրենքով նախատեսված անցումային անհատական լիցենզիա բուժաշխատողները պետք է ստանան մինչև 2026 թվականի հունվարի 1-ը, իսկ անհատական լիցենզիա ստացող ավագ բուժաշխատողները պետք է անհատական լիցենզիա ստանան մինչև 2027 թվականի հունվարի 1-ը:

5. Ավագ բուժաշխատողների կողմից ձեռք բերված ՇՄՋ հավաստագրերը գործում են մինչև 2027 թվականի հունվարի 1-ը՝ անկախ դրանց մեջ նախատեսված ժամկետից:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

(Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19) բուժաշխատող՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնագիտական գործունեություն իրականացնող ու դրա համար համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում, շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր (այսուհետ՝ ՇՄԶ հավաստագիր)՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա ունեցող, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ.».

2) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) ավագ բուժաշխատող՝ առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն ունի համապատասխան բարձրագույն կրթություն ու բժշկի որակավորում, մասնագիտացում, օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է ՇՄԶ

հավաստագիր և անհատական լիցենզիա, ինչպես նաև դիպլոմավորված մասնագետ, որն ունի համապատասխան հետբուհական մասնագիտական կրթություն, ՇՄՋ հավաստագիր (բացառությամբ առաջին անգամ մասնագիտական գործունեություն իրականացնող՝ համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում և մասնագիտացում ունեցող անձի) և անհատական լիցենզիա կամ մինչև 2014 թվականը (ներառյալ) 10 տարվա անընդմեջ լաբորատոր ախտորոշման ոլորտի աշխատանքային փորձ և վերջին 5 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում ՇՄՋ հավաստագիր և անհատական լիցենզիա ունեցող մասնագետ.».

~~3) 21-րդ կետում «մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրեր» բառերը փոխարինել «ՇՄՋ հավաստագիր» բառերով:~~

3) 21-րդ կետում «որն ունի» բառերից հետո լրացնել «առնվազն» բառը, իսկ «մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրեր» բառերը փոխարինել «առաջին անգամ մասնագիտական գործունեության կամ ՇՄՋ հավաստագիր» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը 22-րդ կետից հետո լրացնել նոր՝ 22.1-ին և 22.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«22.1) անհատական լիցենզիա՝ ավագ բուժաշխատողի՝ առողջապահության բնագավառում ~~որոշակի~~ մասնագիտական գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն.

22.2) անցումային անհատական լիցենզիա՝ կլինիկական օրդինատուրայում (կլինիկական ռեզիդենտուրայում), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող ~~հաստատություններում~~ հաստատությունում ուսումնառող անձանց բարձրագույն բժշկական կրթության հենքի վրա ոչ ինքնուրույն, հսկողության ներքո լիազոր մարմնի կողմից սահմանված ծավալով մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն.».

2) 1-ին մասի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«37) ~~շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր (այսուհետ՝ ՇՄԶ հավաստագիր)~~՝ ՇՄԶ հավաստագիր՝ ավագ բուժաշխատողի անհատական լիցենզիայի ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ, սույն օրենքով նախատեսված դեպքերում, շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ (այսուհետ՝ ՇՄԶ կրեդիտներ) հավաքելու և վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացնելու փաստը հավաստող փաստաթուղթ, իսկ միջին բուժաշխատողների համար՝ ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվություն, որը տրվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում ՇՄԶ կրեդիտներ հավաքելու և վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացնելու դեպքում.»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում «ավագ և միջին բուժաշխատողների» բառերը փոխարինել «ավագ, միջին~~, կրտսեր~~ բուժաշխատողների և կլինիկական օրդինատորների (կլինիկական ռեզիդենտների)» բառերով:

Հոդված 4. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«9) անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա չունեցող անձի, ինչպես նաև միջին բուժաշխատող հանդիսացող և ՇՄԶ հավաստագիր չունեցող անձի հետ դադարեցնել աշխատանքային հարաբերությունները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.»:~~

«9) դադարեցնել անհատական մասնագիտական գործունեության իրականացումը, օրենքով սահմանված կարգով լուծել անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա չունեցող անձի, ինչպես նաև միջին բուժաշխատող հանդիսացող և առաջին անգամ մասնագիտական գործունեության կամ ՇՄԶ հավաստագիր չունեցող անձի հետ կնքված աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիրը կամ ազատել նրան զբաղեցրած պաշտոնից:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում «, բժշկական և ոչ բժշկական մասնագիտությունների, ինչպես նաև նեղ մասնագիտությունների ցանկերը» բառերը փոխարինել ~~«հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների ցանկերը»~~ «հիմնական մասնագիտությունների, նեղ և լրացուցիչ մասնագիտացումների կազմակերպման սկզբունքները և դրանց ցանկերը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից հետո լրացնել նոր 8.1-~~րդ~~ ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1) ավագ բուժաշխատողը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ունենալ անհատական լիցենզիա, իսկ կլինիկական օրդինատորը (կլինիկական ռեզիդենտը), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող ~~հաստատություններում~~ հաստատությունում ուսումնառող անձը՝ անցումային անհատական լիցենզիա.»:

Հոդված 7. Օրենքի 34-րդ հոդվածի՝

1) 7-րդ մասում «32-րդ» բառը փոխարինել «33-րդ» բառով.

2) 13-րդ ~~մասի 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:~~ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. ՄԳՀԱԿ-ն իրականացնում է՝

1) բուժաշխատողների ռեգիստրի վարումը.

2) առաջին անգամ մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրերի տրամադրումը.

3) շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կրեդիտավորումը.

4) ՇՄՋ հավաստագրման գործընթացի վերաբերյալ մշտադիտարկումը.

5) սույն օրենքով նախատեսված դեպքերում ՇՄՋ հավաստագիր ստանալու նպատակով թեստավորման կազմակերպման և իրականացման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

6) անցումային անհատական լիցենզիայի և անհատական լիցենզիայի տրամադրման նպատակով իրականացվող կենտրոնացված քննության կազմակերպման և իրականացման նախապատրաստական աշխատանքների իրականացումը:».

3) 15-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

~~«5. Առողջապահության բնագավառի հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները, չափանիշները, այդ կազմակերպությունների ցանկը, հետբուհական կրթական գործընթացի կազմակերպման տեսակներն ու առանձնահատկությունները, մասնագիտական գործունեության ծավալներից բխող որակավորման շրջանակները, ինչպես նաև մասնագիտական ուղղություններին ու կրթական ծրագրերին ներկայացվող ընդհանրական պահանջները, վերջնարդյունքները սահմանում է Կառավարությունը:»:~~

«5. Առողջապահության ոլորտի հետբուհական մասնագիտական կրթության և լրացուցիչ մասնագիտացման տեսակները, իրականացման կարգը, պայմանները և վերջնարդյունքները սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքը ~~5-րդ~~ 6-րդ գլխից հետո լրացնել նոր՝ ~~5.1-ին~~ 6.1-ին գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ ~~5.1~~ 6.1

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված ~~32.1.~~ 35.1. Բուժաշխատողի անհատական լիցենզավորման կազմակերպման գործընթացը

1. Առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն ինքնուրույն իրականացնելու համար ավագ բուժաշխատողները, որպես ֆիզիկական անձինք, պետք է ստանան անհատական լիցենզիա՝ անկախ նրանց աշխատանքի վայրից, իսկ կլինիկական օրդինատորները (կլինիկական ռեզիդենտները), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող ~~հաստատություններում~~ հաստատությունում ուսումնառող անձինք՝ անցումային անհատական լիցենզիա:

2. Անհատական լիցենզիան և անցումային անհատական լիցենզիան տրամադրվում է կենտրոնացված քննության հանձնման արդյունքում:

3. Կենտրոնացված քննության կազմակերպման եւ իրականացման կարգը,՝ ըստ առողջապահության բնագավառի մասնագիտությունների առանձնահատկությունների, կենտրոնացված քննության արդյունքների բողոքարկման կարգը, կենտրոնացված քննություն իրականացնող քննական լիցենզավորող հանձնաժողովի ձևավորման կարգը, աշխատակարգը և անհատական կազմը սահմանում է լիազոր մարմինը:

4. Անհատական լիցենզիա ստանալու համար կենտրոնացված քննությունն իրականացվում է հետբուհական կրթական ծրագրերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո՝ առանձին փուլով, լիազոր մարմնի կողմից ձևավորված լիցենզավորող հանձնաժողովի կողմից:

~~4.~~ 5.Կենտրոնացված քննությունն իրականացվում է մասնագիտական հանձնաժողովների կողմից կազմված տեսական գիտելիքների և գործնական հմտությունների վերաբերյալ առաջադրանքների հիման վրա: Մասնագիտական հանձնաժողովների ձևավորման կարգը, անհատական կազմը և աշխատակարգը սահմանում է լիազոր մարմինը:

~~5~~ 6. Կենտրոնացված քննությունը կազմակերպվում է ըստ առողջապահության բնագավառի հիմնական մասնագիտությունների: եւ ?կամ) նեղ մասնագիտացումների:

~~6~~. 7. Անհատական լիցենզիան տրամադրվում է առողջապահության բնագավառի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող

ուսումնական հաստատությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտած, անհատական լիցենզիա ստանալու համար կենտրոնացված քննությունը հանձնած անձանց:

~~7.~~ 8. Անցումային անհատական լիցենզիան տրամադրվում է առողջապահության բնագավառի բարձրագույն մասնագիտական կրթության փաստը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հիման վրա՝ անցումային անհատական լիցենզիա ստանալու համար կազմակերպվող կենտրոնացված քննության հանձնման արդյունքում կլինիկական օրդինատուրա (կլինիկական ռեզիդենտուրա) կամ ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատություններ հաստատություն ընդունված անձանց՝ ուսումնառությունն սկսելու պահից:

~~8.~~ 9. Անհատական լիցենզիա և անցումային անհատական լիցենզիա տալու, դրա տրամադրումը մերժելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ եզրակացությունները տրվում են լիցենզավորող հանձնաժողովի կողմից, որի կազմում լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կարող են ներգրավվել նաև միջգերատեսչական ներկայացուցիչներ:

~~9.~~ 10. Լիցենզավորող հանձնաժողովը իրավասու է քննելու նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բուժաշխատողի գործունեության որակի վերաբերյալ բողոքները;՝ լիազոր մարմնի հրամաններով սահմանված որակի պահանջներին համապատասխան: Բողոք ներկայացնելու և այն քննելու կարգը սահմանում է լիազոր մարմիը:

~~10~~. 11. Սույն հոդվածի ~~9-րդ~~ 10-րդ մասով նախատեսված բողոքների քննության արդյունքում լիցենզավորող հանձնաժողովը կարող է՝

~~1) լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն մեկ տարվա ընթացքում առաջին անգամ խախտում կատարած բուժաշխատողին նկատողություն տալու վերաբերյալ.~~

~~2) մեկ տարվա ընթացքում կրկին բուժաշխատողի կողմից խախտում կատարվելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն բուժաշխատողին խիստ նկատողություն տալու վերաբերյալ.~~

~~3) մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ բուժաշխատողի կողմից խախտում կատարվելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ կասեցնել բուժաշխատողի անհատական լիցենզիան՝ մեկ ամիս ժամկետով:~~

1) մեկ տարվա ընթացքում առաջին անգամ բուժաշխատողի կողմից խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը մեկ ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ.

2) մեկ տարվա ընթացքում բուժաշխատողի կողմից կրկին խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը երեք ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ:

~~11.~~ 12. Սույն հոդվածի ~~10-րդ~~ 11-րդ մասով նախատեսված դեպքերում լիցենզավորող ~~հանձնաժողովի առաջարկության հիման վրա լիազոր մարմնի ղեկավարը դիմում է համապատասխան բուժաշխատողի գործատուին՝ վերջինիս նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու համար:~~ հանձնաժողովի առաջարկությունն ստանալուց հետո, լիազոր մարմնի ղեկավարը հնգօրյա ժամկետում որոշում է կայացնում տվյալ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ:

~~12.~~ 13. Անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիա ստանալու հայտի ձևերը, անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիայի ձևերը, դրանց տրամադրումը մերժելու հիմքերը և կարգը, տրամադրման և գործողության ժամկետի երկարաձգման կարգը սահմանում է Կառավարությունը:

~~13.~~ 14. Առողջապահության բնագավառի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող այն ուսումնական հաստատությունները, որոնց շրջանավարտների 70 և ավելի տոկոսը կենտրոնացված քննությունը հանձնելու և դրա արդյունքների հիման վրա անհատական կամ անցումային լիցենզիա չեն

ստանում, զրկվում են տվյալ տարվա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ֆինանսավորման հնարավորությունից:

~~14.~~ 15. Անհատական լիցենզիան և անցումային անհատական լիցենզիան տրամադրում է լիազոր մարմինը՝ էլեկտրոնային եղանակով:

~~15~~. 16. Անհատական լիցենզիան տրվում է հինգ տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:

~~16~~. 17. Սույն հոդվածի ~~15-րդ~~ 16-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 3 ամիս առաջ ավագ բուժաշխատողը, դիմում է հաջորդ հինգ տարիների համար անհատական լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով:

~~17~~. 18. Անհատական լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է, եթե բուժաշխատողը անցել է ՇՄՌ հավաստագրում և առկա չեն վերջինիս անհատական լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ օրենքով սահմանված հիմքեր:

~~18.~~ 19. Անցումային անհատական լիցենզիան տրվում է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունում ուսում ստանալու ժամանակահատվածի համար:

~~19.~~ 20. Կլինիկական օրդինատորները (կլինիկական ռեզիդենտները), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող ~~հաստատություններում~~ հաստատությունում ուսումնառող անձինք իրավունք ունեն իրականացնելու բժշկական օգնություն և սպասարկում՝ միայն լիազոր մարմնի կողմից սահմանված ծավալով:

~~20~~. 21. Ռազմաբժշկական ուսումնական հաստատություն կամ պետական լիազոր մարմնի պատվերով բարձրագույն բժշկական ուսումնական հաստատություններ ավարտած և սահմանված կարգով անհատական լիցենզա չստանալու հիմքով պայմանագրային զինվորական ծառայությունից արձակված ավագ բուժաշխատողին սահմանված կարգով անհատական լիցենզիա կարող է տրամադրվել ~~պահեստազոր արձակվելուց երեք տարի հետո:~~ պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու օրվանից հինգ տարի հետո:

~~21~~. 22. Անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիայի տրամադրման համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով:

~~22.~~ 23. Անցումային անհատական լիցենզիայի և անհատական լիցենզիայի տրամադրման, դրանց գործողության կասեցման կամ դադարեցման, անհատական լիցենզիայի գործողության երկարաձգման վերաբերյալ տվյալները մուտքագրվում են բուժաշխատողների ռեգիստր:

24. Անձը կարող է ունենալ մեկից ավելի գործող անհատական լիցենզիա, եթե բավարարում է սույն օրենքով սահմանված պահանջները և դրանց հիման վրա մասնագիտական գործունեություն է իրականացնում:

Հոդված ~~32.2.~~ 35.2. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողության կասեցումը

1. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը կասեցվում է՝

1) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետում հավաստագրում չանցնելու դեպքում.

2) անձի՝ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

~~4)~~ 3) սույն օրենքի ~~32.1-ին~~ 35.1-ին հոդվածի 11-րդ ~~մասի 3-րդ կետով~~ մասով նախատեսված ~~դեպքում:~~ դեպքերում.

~~3)~~ 4) սույն օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ ~~կետի գ. ենթակետով~~ կետով նախատեսված ~~դեպքում.~~ դեպքերում.

5) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի վերացման դեպքում բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը վերականգնվում է լիազոր մարմնի կողմից՝ այն բուժաշխատողի դիմումի հիման վրա, որի անհատական լիցենզիայի գործողությունը կասեցվել էր:

3. Անհատական լիցենզիայի վերականգնման կամ վերականգնումը մերժելու վերաբերյալ լիազոր մարմնի հրամանն ընդունվում է բուժաշխատողի դիմումն ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը վերականգնելը մերժելու մասին լիազոր մարմնի հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով կամ դատական կարգով:

Հոդված ~~32.3.~~ 35.3. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողության դադարեցումը

1. Բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) անձը լիցենզիա է ստացել օրենքի պահանջների խախտմամբ.

2) անձը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձն ազատազրկման է դատապարտվել և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ.~~ մարված կամ վերացված չէ.

4) անձը մահացել է, կամ ուժի մեջ է մտել նրան մահացած ճանաչելու մասին դատարանի ակտը.

5) անձը ձեռք է բերել Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված բժշկական մասնագիտական գործունեությանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն.

6) զինվորական ծառայության մեջ գտնվող անձը սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հավաստագրում չանցնելու միջոցով անհատական լիցենզիայի գործողության կասեցման կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքված պայմանագրի վաղաժամկետ դադարեցման (խախտման) հիմքով արձակվել է պահեստազոր.

~~6)~~ 7) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով անհատական լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր անհատական լիցենզիա ստանալու համար դիմել միայն անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո:

3. Անհատական լիցենզիայի դադարեցման համար սույն հոդվածի 1-ին մասի 2-~~6~~ 7-րդ կետերով սահմանված հիմքերի վերացման դեպքում անձն իրավունք ունի այդ հիմքերի վերացումից հետո դիմել անհատական լիցենզիա ստանալու համար՝ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված կենտրոնացված քննություն հանձնելով:

Հոդված ~~32.4.~~ 35.4. Անցումային անհատական լիցենզիայի գործողության կասեցումը

1. Անցումային անհատական լիցենզիայի գործողությունը կասեցվում է՝

~~1) մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ մասնագիտական էթիկայի կանոնները խախտելու դեպքում՝ 1 ամիս ժամկետով.~~

~~2) անձի՝ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.~~

~~3) սույն օրենքի 32.1 ին հոդվածի 10 րդ մասի 3 րդ կետով նախատեսված դեպքում:~~

1) սույն օրենքի 35.1-ին հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերում.

2) անձի՝ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

3) սույն օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը վերանալուց հետո անցումային անհատական լիցենզիա ստացած անձի դիմումի հիման վրա անցումային անհատական լիցենզիայի գործողությունը վերականգնվում է լիազոր մարմնի կողմից:

3. Անցումային անհատական լիցենզիայի վերականգնման կամ վերականգնումը մերժելու վերաբերյալ լիազոր մարմնի հրամանն ընդունվում է անցումային անհատական լիցենզիա ստացած անձի դիմումն ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Անցումային անհատական լիցենզիայի գործողությունը վերականգնելը մերժելու մասին լիազոր մարմնի հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով կամ դատական կարգով:

Հոդված ~~32.5.~~ 35.5. Անցումային անհատական լիցենզիայի գործողության դադարեցումը

1. Անցումային անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցվում է՝

1) կլինիկական օրդինատուրայում (կլինիկական ռեզիդենտուրայում), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող ~~հաստատություններում~~ հաստատությունում ուսումը դադարեցնելու դեպքում.

2) անձի՝ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

3) եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձն ազատազրկման է դատապարտվել և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ.~~ մարված կամ վերացված չէ.

4) եթե անձը մահացել է, կամ ուժի մեջ է մտել նրան մահացած ճանաչելու մասին դատարանի ակտը.

5) անձը ձեռք է բերել Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված բժշկական մասնագիտական գործունեությանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն.

6) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի վերացման և ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու դեպքում անձն իրավունք ունի այդ հիմքերի վերացումից հետո դիմել անցումային անհատական լիցենզիա ստանալու համար:»:

Հոդված 10. Օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ ~~կետի գ. ենթակետում «բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի լիցենզիան միայն տվյալ բուժաշխատողի մասով՝ մեկ ամիս ժամկետով» բառերը փոխարինել~~

~~«բուժաշխատողի անհատական լիցենզիան՝ մեկ ամիս ժամկետով» բառերով~~ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) օրենքով քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հաստատման դեպքում՝

ա. լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն մեկ տարվա ընթացքում առաջին անգամ մասնագիտական էթիկայի կանոնի խախտում կատարած բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը մեկ ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը.

բ. մեկ տարվա ընթացքում բուժաշխատողի կողմից կրկին մասնագիտական էթիկայի կանոնի խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը երեք ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը:»:

Հոդված 11. Օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Էթիկայի հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումների ընդունման հիման վրա լիազոր մարմնի ղեկավարը որոշում է կայացնում տվյալ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ:»:

~~***Հոդված 11. Անցումային և եզրափակիչ դրույթներ***~~

Հոդված 12. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ՝ սույն օրենքի՝ ~~1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ հոդվածների,~~

~~7-րդ հոդվածի 2-րդ մասի, 8-րդ, 9-րդ եւ 10-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2024 թվականի փետրվարի 1-ից:~~

1) 1-ին հոդվածի 1-ին մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից.

2) 1-ին հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.

3) 2-րդ հոդվածի 1-ին մասի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 1-ից.

4) 2-րդ հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.

5) 4-րդ, 6-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, որոնք անցումային անհատական լիցենզիայի մասով ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից, իսկ անհատական լիցենզիայի մասով՝ 2027 թվականի հունվարի 1-ից.

6) 8-րդ և 9-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունիսի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են մինչև ~~2024 թվականի հոկտեմբերի 1-ը:~~ 2025 թվականի փետրվարի 1-ը:

3. Անհատական լիցենզավորման գործընթացի մեկնարկը սկսվում է ~~2024 թվականի հոկտեմբերի 15-ից~~՝ 2025 թվականի օգոստոսի 1-ից՝ լիազոր մարմնի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

4. Սույն օրենքով նախատեսված անցումային անհատական լիցենզիա բուժաշխատողները պետք է ստանան մինչեւ ~~2025~~ 2026 թվականի հունվարի 1-ը, իսկ անհատական լիցենզիա ստացող ավագ բուժաշխատողները պետք է անհատական լիցենզիա ստանան մինչև 2027 թվականի հունվարի 1-ը:

5. Ավագ բուժաշխատողների կողմից ձեռք բերված ՇՄՋ հավաստագրերը գործում են մինչև 2027 թվականի հունվարի 1-ը՝ անկախ դրանց մեջ նախատեսված ժամկետից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 5.1.-ին գլուխ	Առաջարկում եմ վերանայել նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 5.1 գլխի և այդ գլխում շարադրվող հոդվածների համարակալումները՝ հաշվի առնելով 2-րդ ընթերցմամբ ընդունված Պ-609[1]-01.06.2023,08.09.2023-ԱռՀ-011/2ամբ. նախագծի համարակալումը: Կամ օրենքի տրամաբանությունից ելնելով՝ այդ կարգավորումները նախատեսել 6.1-ին գլխով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Բուժաշխատողների անհատական և անցումային անհատական լիցենզավորման մասին կարգավորումները նախատեսվել են 6.1-ին գլխով, որի արդյունքում փոփոխվել են նաև հոդվածների համարակալումներ /35.1-35.5-րդ հոդվածներ/:	Ընդունվել է:
2.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	**Առաջարկում եմ** վերանայել 1-ին հոդվածով խմբագրվող գործող օրենքի 2-րդ հոդվածի 20-րդ կետի հետևյալ բառակապակցության իմաստը՝ <<, ինչպես նաև դիպլոմավորված մասնագետ, որն ունի համապատասխան հետբուհական մասնագիտական կրթություն, ՇՄՋ հավաստագիր>>: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Դիպլոմավորված մասնագետի համար, որն ունի համապատասխան հետբուհական մասնագիտական կրթություն, ՇՄՋ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Նախագծում ավագ բուժաշխատողի հասկացությունը խմբագրվել է: Միաժամանակ խմբագրվել է նաև նախագծի 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս հավաստագրերի տրամադրումը և բուժաշխատողների գրանցումն իրականացվումէ	Ընդունվել է:

			հավաստագրի պահանջ դնելը չի համապատասխանում 34-րդ հոդվածի 13-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին նախագծի 7-րդ հոդվածի դրույթի հետ: Բացի այդ, անհրաժեշտ է վերանայել 3-րդ կետի բովանդակությունը՝ հստակեցնելով հավաստագրերի անվանումները:	բուժաշխատողների ռեգիստրի միջոցով: Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետը խմբագրվել է և վերջնական ինկորպորացված տարբերակում կունենա հետևյալ բովանդակությունը. «21) **միջին բուժաշխատող՝** առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն ունի առնվազն միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ու որակավորում և օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է առաջին անգամ մասնագիտական գործունեության կամ ՇՄՋ հավաստագիր:»:	
3.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում և ամբողջ տեքստում	**Առաջարկում եմ** նախագծի 2-րդ հոդվածով լրացվող գործող օրենքի 2-րդ հոդվածում լրացվող 22.2-րդ կետում և նախագծի ամբողջ տեքստում (6-րդ, 9-րդ հոդվածներում) «ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատություններում» բառերը փոխարինել «ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատությունում» բառերով: Բացի այդ, առաջարկում եմ 22.1-ին կետում «որոշակի մասնագիտական գործունեության տեսակով» բառերը փոխարինել «մասնագիտական գործունեության որոշակի տեսակով» բառերով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
4.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում	**Առաջարկում եմ** պարզաբանել՝ նախագծի 5-րդ հոդվածով՝ բժշկական և ոչ բժշկական մասնագիտությունների, ինչպես նաեւ նեղ մասնագիտությունների ցանկերը փոխարինելով	Ընդունվել է մասնակի: Հոդվածը խմբագրվել է: Լիազոր մարմնի կողմից ըստ նախագծի՝ կհաստատվեն	Ընդունվել է:

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 5-րդ հոդված	հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների ցանկերով, ոչ բժշկական մասնագիտությունները որ՞ ցանկում (նեղ թե՞ հիմնական) արձանագրված կլինեն:	առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների, նեղ և լրացուցիչ մասնագիտացումների կազմակերպման սկզբունքները և դրանց ցանկերը: Իսկ ոչ բժշկական մասնագիտությունների հարցի կարգավորմանը հնարավոր կլինի անդրադառնալ ավելի ուշ, նախնական քննարկումներ անցկացնելուց հետո:	
5.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է վերանայել կամ պարզաբանել նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը, ըստ որի ուժը կորցրած է ճանաչվում Օրենքի 34-րդ հոդվածի 13-րդ մասի 2-րդ կետը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել նոր խմբագրությամբ: ՄԳՀԱԿ-ի գործառույթները վերանայվել են՝ հաշվի առնելով բուժաշխատողների ռեգիստրի գործարկման հանգամանքը և անհատական լիցենզավորման ինստիտուտի ներդրումը:	Ընդունվել է:
9.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին /լրամշակված նախագծի 35.1-ին/ հոդված	Առաջարկվում է անհատական լիցենզավորման նպատակով Առողջապահության նախարարության կողմից իրականացվող կենտրոնացված քննությունը իրականացնել որպես հետբուհական կրթության ավարտական ատեստավորման գործընթացի տրամաբանական շարունակություն, սակայն առանձին փուլով, լիցենզավորող հանձնաժողովի կողմից՝ չնույնացվելով ավարտական ատեստավորման գործընթացի հետ:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Նոր կարգավորումը նախատեսված է նախագծի 35.1-ին հոդվածի 4-րդ մասով: Նույն հոդվածի մասերի համարակալումը լրացման արդյունքում փոփոխվել է, իսկ 3-րդ մասում «քննական» բառը փոխարինվել է «լիցենզավորող» բառով:	Ընդունվել է:
10.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 11-րդ անցումային դրույթներ հոդվածի 5-րդ մասի՝ «Ավագ բուժաշխատողների կողմից ձեռք բերված ՇՄՋ հավաստագրերը գործում են	Ընդունվել է ի գիտություն: Գործող օրենքի համաձայն՝ ՇՄՋ հավաստագիրը հանդիսանում է	Ընդունվել է:

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 5-րդ մաս	մինչև 2027 թվականի հունվարի 1-ը՝ անկախ դրանց մեջ նախատեսված ժամկետից:» դրույթը: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Նախագծով 5 տարով գործող ՇՄԶ հավաստագրի՝ մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքը դառնում է 4 տարի, ինչը վատթարացնող դրույթ է: Միաժամանակ, դրանով խախտվում է գործող օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 5 տարով ՇՄԶ ստանալու մասին դրույթը:	մասնագիտական գործունեությունն իրականացնելու թույլտվություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի ընդունումից հետո անհատական լիցենզիան և անցումային անհատական լիցենզիան են հանդիսանալու առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել նախագծով նման դրույթ սահմանել՝ բացառելով թույլտվություն տվող 2 տարբեր փաստաթղթերի առկայությունը: Միաժամանակ, նախագծի համարակալման փոփոխության արդյունքում նախագծի 11-րդ հոդվածի 5-րդ մասը դարձել է 12-րդ հոդվածի 5-րդ մաս:	
11.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 5-րդ մաս	Ներկայումս ԵՊԲՀ Ռազմաբժշկական ֆակուլտետն ավարտած ուսանողներին շնորհվում է բ/ծ լեյտենանտի կոչում և նրանք ըստ իրենց պայմանագրի՝ վիճակահանության սկզբունքով, ծառայության են անցնում ՀՀ տարբեր զորամասերում որպես զորամասի բուժկետի բժիշկ: Մի քանի տարի զորամասային օղակում ծառայելուց հետո նրանք ունենում են հնարավորություն կլինիկական օրդինատուրա դիմելու և սովորելու համար, որպեսզի դառնան նեղ մասնագետ և իրենց պայմանագրով նախատեսված ծառայությունը շարունակեն հոսպիտալային օղակում; Ընդունվող նախագծի տրամաբանությամբ, այն է՝ «22.1) անհատական լիցենզիա՝ ավագ բուժաշխատողի՝ առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական	Ընդունվել է ի գիտություն: ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի շրջանավարտները այլևս «լեյտենանտ» զինվորական կոչում չեն ստանում, քանի որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ռազմաբժշկական բնույթի ռազմաուսումնական հաստատություն ավարտած զինծառայողին «լեյտենանտ» զինվորական կոչում շնորհվում է ինտերնատուրան ավարտելուց հետո: Իսկ ռազմաբժշկական	Ընդունվել է:

			գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն. 22.2) անցումային անհատական լիցենզիա՝ կլինիկական օրդինատուրայում (կլինիկական ռեզիդենտուրայում), ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատություններում ուսումնառող անձանց բարձրագույն բժշկական կրթության հենքի վրա ոչ ինքնուրույն, հսկողության ներքո լիազոր մարմնի կողմից սահմանված ծավալով մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն.». ԵՊԲՀ Ռազմաբժշկական ֆակուլտետն ավարտած ուսանողները իրավունք չեն ունենա աշխատելու որպես բժիշկ, քանի որ նրանք չեն կարող դիմել անցումային անհատական կամ անհատական լիցենզիա ստանալու, որը բժիշկ աշխատելու իրավունք է: Հետևաբար, ստացվում է մի իրավիճակ, երբ քսան տարով պայմանագիր կնքած և ՀՀ Զինված Ուժերում ծառայելու պարտավորություն ստանձնած ԵՊԲՀ Ռազմաբժշկական ֆակուլտետն ավարտած ուսանողները չեն կարող շառայության անցնել ՀՀ զինված Ուժերում որպես բժիշկ: 2. Ներկայումս ՀՀ Զինված Ուժերում ծառայող ավագ բուժաշխատողները անհատական լիցենզիա չստանալու հիմքով՝ իրենց պայմանագրով նախատեսված ժամանակից շուտ զորացրվելու են պահեստազոր, ինչը ևս խնդրահարույց է թե պետության ներդրումների և ակնկալիքների տեսանկյունից և թե ՀՀ Զինված Ուժերի կադրային քաղաքականության տեսանկյունից:	ֆակուլտետի (այդ թվում նաև օտարերկրյա պետությունների) շրջանավարտների համար ինտերնատուրայում ուսումնառությունը սահմանված է «Բարձրագույն և հետբուհական կրության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասին 6-րդ կետով, որի համաձայն՝ ՀՀ և օտարերկրյա այլ պետությունների ռազմաբժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ ստորաբաժանումների շրջանավարտների համար սահմանված է մեկ տարի տևողությամբ հետբուհական ուսուցում՝ ինտերնատուրա: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված է համապատասխան կարգավորում, ըստ որի՝ «Լեյտենանտ» զինվորական կոչում շնորհվում է՝ 1) ռազմաուսումնական հաստատություն կամ սպայական դասընթաց ավարտած՝ սպայական կոչում չունեցող զինծառայողներին, ընդ որում՝ ռազմաբժշկական բնույթի ռազմաուսումնական հաստատություն ավարտած զինծառայողին «լեյտենանտ» զինվորական կոչում շնորհվում է **<u>ինտերնատուրան ավարտելուց և անհատական լիցենզիա ստանալուց հետո:</u>**	

12.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդված	**Առաջարկում եմ** նախագծի նոր լրացվող 5.1-ին գլխում նախատեսել դրույթներ՝ ավագ բուժաշխատողների մեկից ավելի անհատական լիցենզիա ունենալու դեպքերի մասին: **այս հարցերի կարգավորումները ենթակա են սույն օրենքով կարգավորման:**	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ Նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 6.1 գլխի /նախկին գլուխ 35.1-ին, հոդված 32.2-րդ/ 35.1-ին հոդվածը լրացվել է նոր՝ 23-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «23. Անձը կարող է ունենալ մեկից ավելի գործող անհատական լիցենզիա, եթե բավարարում է սույն օրենքով սահմանված պահանջները և դրանց հիման վրա մասնագիտական գործունեություն է իրականացնում:»:	Ընդունվել է:
13.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 4-րդ հոդված	**Առաջարկում եմ** վերանայել նախագծի 4-րդ հոդվածով շարադրվող գործող օրենքի 28-րդ հոդվածի <<աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին>> դրույթը: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Բժշկական համայնքի զգալի անդամներ աշխատում են քաղաքացիաիրավական պայմանագրերով, իսկ ՀՀ զինված ուժերում բժիշկները՝ զինվորական ծառայության մասին պայմանագրերով, ծառայություններ մատուցելու հիմքով, և վերջիններիս լիցենզիա չունենալու պարագայում Աշխատանքային պայմանագիրը լուծելու հնարավորություն չի լինելու:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «9) դադարեցնել անհատական մասնագիտական գործունեության իրականացումը, օրենքով սահմանված կարգով լուծել անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա չունեցող անձի, ինչպես նաև միջին բուժաշխատող հանդիսացող և առաջին անգամ մասնագիտական գործունեության կամ ՇՄՋ հավաստագիր չունեցող անձի հետ կնքված աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիրը կամ ազատել նրան զբաղեցրած պաշտոնից:»:	Ընդունվել է:

14.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 11-րդ (նոր համարակալմամբ 12-րդ) հոդված	Առաջարկվում է վերանայել նախագծի անցումային դրույթներով սահմանված ուժի մեջ մտնելու ժամկետները, քանի որ սահմանված ժամկետներն արդեն անցել են:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի 12-րդ հոդվածով սահմանված ժամկետները վերանայվել են: Մասնավորապես՝ 1) 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 6-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածները անցումային անհատական լիցենզիայի մասով ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից, իսկ անհատական լիցենզիայի մասով՝ 2027 թվականի հունվարի 1-ից. 2) 2-րդ հոդվածի 1-ին մասը ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 1-ից. 3) 2-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից. 4) 4-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներն մեջ են մտնում 2024 թվականի հունիսի 1-ից: Նախագծից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման համար ժամկետ է սահմանվել մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը, անհատական լիցենզավորման գործընթացի մեկնարկը նախատեսվել է սկսել 2025 թվականի օգոստոսի 1-ից, իսկ անցումային անհատական լիցենզիա ստանալու համար ժամկետ է սահմանվել մինչև 2026 թվականի հունվարի 1-ը՝ 2025 թվականի հունվարի 1-ի փոխարեն: Անհատական լիցենզիա ստանալու համար՝ 2027	Ընդունվել է:

				թվականի հունվարի 1-ը:	
15.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագիծ	Ելնելով նրանից, որ Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի <<Բուժական գործ>> անընդհատ և ինտեգրված (հայալեզու, անգլալեզու և ռուսալեզու) երեք կրթական ծրագրերը 2024 թվականին Բժշկական Կրթության Միջազգային Ֆեդերացիայի (WFME) կողմից, ստացել է համապատասխան ծրագրային հատարմագրում՝ 7 տարի ժամկետով, որը համալսարանին շնորհվել է NCEQE (National Center for Educational Quality Enhancement) միջազգային հավատագրման կառույցի կողմից, Առաջարկում եմ համալսարանի հետբուհական ուսուցումն ավարտողներին, առանց հավաստագրի և առանց անհատական լիցենզավորման գործընթացն անցնելու համարել լիցենզավորված ավագ բուժաշխատողներ:	Ընդունվել է ի գիտություն: Ներկայացված առաջարկության համաձայն՝ հավատարմագրվել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» ծրագիրը, որն իրենից ներկայացնում է ***բուհական*** կրթական ծրագիր և առաջարկվում է ԵՊԲՀ հ***ետբուհական*** ծրագրերն անցած ուսանողների վրա չտարածել անհատական լիցենզավորման համար նախատեսված կարգավորումները, սակայն ԵՊԲՀ ***հետբուհական*** ծրագրերը հավատարմագրման գործընթաց չեն անցել: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ գործող բոլոր բժշկական բուհերը, համաձայն առկա իրավակարգավորումների, ստացել են համապատասխան գործունեության թույլտվություն և դրանց շրջանավարտներին շնորհվում են պետական նմուշի միևնույն ավարտական փաստաթղթերը: Հետևաբար, սույն առաջարկը չի բխում ներկա պահին իրականացվող քաղաքականությունից:	Ընդունվել է:
16.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի **1-ին հոդվածի 1-ին և 3-րդ**	Առաջարկում ենք վերանայել «միջին բուժաշխատող»-ի հասկացությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ-ում ներդրվել է «քույրական գործ» մասնագիտությամբ բակալավրիատ (գործում է Հայաստանի ամերիկյան համալսարանում): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր» հասկացությունն առաջին անգամ օգտագործվում է Օրենքի 2-րդ	Ընդունվել է: Ըստ այդմ, նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթը խմբագրվել է և նախատեսվել է օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետում «որն ունի» բառերից հետո լրացնել «առնվազն» բառը, որը հնարավորություն կտա	Ընդունվել է:

		մասեր	հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում, առաջարկվում է վերջինիս հապավումը «այսուհետ՝ ՇՄՋ հավաստագիր» ձևակերպումը սահմանել այս կետում:	«քույրական գործ» մասնագիտությամբ բակալավրիատն ավարտած անձանց դասել միջին բուժաշխատողների շարքին: Միաժամանակ, ՇՄՋ հավաստագրի հապավումը նախատեսվել է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում:	
17.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի **3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածն առաջարկվում է խմբագրել՝ կրտսեր բուժաշխատողներին բուժաշխատողների ռեգիստրում չներառելով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
18.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի **8-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթը խմբագրել՝ իրավական ակտի հստակության պահանջի տեսանկյունից: Ըստ այդմ, նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ . «5. Առողջապահության ոլորտի հետբուհական մասնագիտական կրթության և լրացուցիչ մասնագիտացման տեսակները, իրականացման կարգը, պայմանները և վերջնարդյունքները սահմանում է Կառավարությունը:»:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
19.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-	Նախագծի **9-րդ հոդվածով** լրացվող 5.1 գլխի 32.1-ին հոդվածի 5-րդ մասում (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35.1-ին հոդվածի 6-րդ մաս) անհրաժեշտ է ապահովել շաղկապների կիրառման կանոնները, մասնավորապես՝ եթե թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա գործածել	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Դրույթը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.՝ «6. Կենտրոնացված քննությունը կազմակերպվում է ըստ առողջապահության	Ընդունվել է:

		08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի **9-րդ հոդվածով** լրացվող 5.1 գլխի 32.1-ին հոդվածի 3-րդ և 5-րդ մաս (լրամշակված նախագծի 6 .1-ին գլխի 35.1-ին հոդվածի) 3-րդ և 6-րդ մասեր	«կամ» շաղկապը, իսկ եթե թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, ապա գործածել «և» շաղկապը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի դրույթները:	բնագավառի հիմնական մասնագիտությունների:»: Միաժամանակ, լրացում է կատարվել նույն հոդվածի 3-րդ մասով, որտեղ մասնավորապես սահմանվել է, որ կենտրոնացված քննությունը կազմակերպվում և իրականացվում է ըստ առողջապահության բնագավառի մասանգիտությունների առանձնահատկությունների: հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: »	
20.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի **9-րդ հոդվածով** լրացվող 5.1 գլխի 32.1-ին հոդվածի 9-րդ մաս (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35 .1-ին հոդվածի 10-րդ մաս)	Առաջարկում ենք նախագծի **9-րդ հոդվածով** լրացվող 5.1 գլխի 32.1-ին հոդվածի 9-րդ մասում (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35.1-ին հոդվածի 10-րդ մաս) հստակեցնել, թե որակի պահանջները ո՞ւմ կողմից են սահմանվում:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, լրամշակված նախագծի 35.1-ին հոդվածի 10-րդ մասում «բողոքները» բառից հետո լրացվել են «լիազոր մարմնի հրամաններով սահմանված որակի պահանջներին համապատասխան» բառերը, որի արդյունքում ամրագրվել է որ այդ պահանջները սահմանվում են լիազոր մարմնի կողմից:	Ընդունվել է:
21.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի 10-րդ մաս	Առաջարկվում ենք նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի (նոր շարադրությամբ 35.1-ին հոդված) 11-րդ մասով սահմանված խախտում կատարած բուժաշխատողի նկատմամբ կիրառող տույժերը վերանայել: Մասնավորապես, խոսքը վերաբերում է բուժաշխատողի նկատմամբ նախատեսված կարգապահական տույժ կիրառելու նպատակով լիազոր մարմնի կողմից առաջարկության ներկայացմանը, որի դեպքում որևէ ձևով հնարավոր չէ վերահսկել, թե արդյոք	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի (նոր շարադրությամբ 35.1-ին հոդված) 11-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «11. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված բողոքների քննության արդյունքում լիցենզավորող	

		(լրամշակված նախագծի 6 .1-ին գլխի 35.1-ին հոդվածի) 11-րդ մաս	գործատուի կողմից կարգապահական տույժ կկիրառվի, թե ոչ:	հանձնաժողովը կարող է՝ 1) մեկ տարվա ընթացքում առաջին անգամ բուժաշխատողի կողմից խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը մեկ ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ. 2) մեկ տարվա ընթացքում բուժաշխատողի կողմից կրկին խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն՝ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը երեք ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ:»:	
22.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի 11-րդ մաս (լրամշակված նախագծի 6 .1-ին գլխի 35.1-ին հոդվածի 12-րդ մաս)	Առաջարկում ենք նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի 11-րդ մասը (նոր շարադրությամբ 6.1-ին գլխի 35.1-ին հոդվածի 12-րդ մաս) ևս խմբագրել՝ լիցենզիաների կասեցման ընթացակարգը հստակեցնելով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի 11-րդ մասը (նոր շարադրությամբ 6.1-ին գլխի 35.1-ին հոդվածի 12-րդ մաս) շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված դեպքերում լիցենզավորող հանձնաժողովի առաջարկությունն ստանալուց հետո, լիազոր մարմնի ղեկավարը հնգօրյա ժամկետում որոշում է կայացնում տվյալ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի	Ընդունվել է:

				գործողությունը կասեցնելու վերաբերյալ:»:	
23.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի 20-րդ մաս (լրամշակված նախագծի 6 .1-ին գլխի 35.1-ին հոդվածի 21-րդ մաս)	Առաջարկում ենք նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի 20-րդ մասը (նոր շարադրությամբ 35.1-ին հոդվածի 21-րդ մաս) խմբագրել՝ տեքստում միատեսակ տերմինների օգտագործման անհրաժեշտությունից ելնելով: Մասնավորապես, առաջարկում ենք «պահեստազոր արձակվելուց երեք տարի հետո» բառերը փոխարինելով «պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու օրվանից հինգ տարի հետո» բառերով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.1-ին հոդվածի 20-րդ մասը (նոր շարադրությամբ 35.1-ին հոդվածի 21-րդ մաս) շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «21. Ռազմաբժշկական ուսումնական հաստատություն կամ պետական լիազոր մարմնի պատվերով բարձրագույն բժշկական ուսումնական հաստատություններ ավարտած և սահմանված կարգով անհատական լիցենզա չստանալու հիմքով պայմանագրային զինվորական ծառայությունից արձակված ավագ բուժաշխատողին սահմանված կարգով անհատական լիցենզիա կարող է տրամադրվել պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու օրվանից հինգ տարի հետո:»:	Ընդունվել է:
24.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ	Նախագծի 32.2-րդ հոդվածի (նոր շարադրությամբ 35.2-րդ հոդված) 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերն առաջարկում ենք վերանայել՝ հղումները հստակեցնելով:	Ընդունվել է: Ըստ այդմ, նախագծի 32.2-րդ հոդվածի (նոր շարադրությամբ 35.2-րդ հոդվածի) 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերը վերանայվել են և շարադրվել հետևյալ խմբագրությամբ. «3) սույն օրենքի 35.1-ին հոդվածի 11-րդ մասով	Ընդունվել է:

		հոդվածով լրացվող 32.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետեր (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետեր)		նախատեսված դեպքերում. 4) սույն օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:»:	
25.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 32.5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ և 35.5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ)	Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում և 32.5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ և 35.5-րդ հոդվածի 1-ին մասի 3 կետ) «դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ» ձևակերպումը վերրանայել, քանի որ գործող Քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև Քրեական օրենսգրքով նման ձևակերպումներ այլևս առկա չեն:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծում «հանված կամ մարված չէ» բառերը փոխարինվել են «մարված կամ վերացված չէ» բառերով:	Ընդունվել է:
26.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.3-րդ հոդվածի 1-ին մաս (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35.3-րդ հոդվածի 1-ին մաս)	Առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 5.1 գլխի 32.3-րդ հոդվածի (նոր շարադրությամբ 6.1-ին գլխի 35.3-րդ հոդվածի) 1-ին մասում որպես անհատական լիցենզիայի դադարեցման հիմք նախատեսել զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կողմից հավաստագրում չանցնելու միջոցով անհատական լիցենզիայի գործողության կասեցման կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքված պայմանագրի վաղաժամկետ դադարեցման (խախտման) հիմքով պահեստազոր արձակվելու հանգամանքը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի 6.1-ին գլխի 35.3-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «6) զինվորական ծառայության մեջ գտնվող անձը սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հավաստագրում չանցնելու միջոցով անհատական լիցենզիայի գործողության կասեցման կամ Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է:

				պաշտպանության նախարարության հետ կնքված պայմանագրի վաղաժամկետ դադարեցման (խախտման) հիմքով արձակվել է պահեսազոր.»: Միաժամանակ, նշված հոդվածի 1-ին մասի կետերի համարակումը փոխվել է՝ 6-րդ կետը համարակալվել է որպես 7-րդ կետ:	
27.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.4-րդ հոդվածի 3-րդ մաս (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35.3-րդ հոդվածի 3-րդ մաս)	Առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 5.1-ին գլխի 32.3-րդ հոդվածի (նոր շարադրությամբ 35.3-րդ հոդված) 3-րդ մասում հստակեցնել, թե անհատական լիցենզիայի դադարեցման համար սույն հոդվածի 1-ին մասի 2-6-րդ կետերով սահմանված հիմքերի վերացման դեպքում անձն ի՞նչ կարգով պետք է դիմի անհատական լիցենզիա ստանալու համար:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, Նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 5.1-ին գլխի 32.3-րդ հոդվածի (նոր շարադրությամբ 35.3-րդ հոդվածի) 3-րդ մասում «համար» բառից հետո լրացվել են «՝ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված կենտրոնացված քննություն հանձնելով» բառերը:	Ընդունվել է:
28.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետեր (լրամշակված նախագծի 6.1-ին գլխի 35.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետեր)	Առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 32.4-րդ հոդվածի (նոր շարադրությամբ նախագծի 6.1-ին գլխի 35.4-րդ հոդված) 1-ին մասը խմբագրել՝ 1-ին և 3-րդ կետերում նշված հղումներն ուղղելու նպատակով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

29.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 10-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածը վերանայել՝ համապատասխանեցնելով նախագծի տրամաբանությանը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի 10-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. **Հոդված 10.** Օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) օրենքով քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հաստատման դեպքում՝ ա. լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն մեկ տարվա ընթացքում առաջին անգամ մասնագիտական էթիկայի կանոնի խախտում կատարած բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը մեկ ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը. բ. մեկ տարվա ընթացքում բուժաշխատողի կողմից կրկին մասնագիտական էթիկայի կանոնի խախտում կատարելու դեպքում լիազոր մարմին ներկայացնել առաջարկություն բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը երեք ամիս ժամկետով կասեցնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով	Ընդունվել է:

				«Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը:»:	
30.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 11-րդ և 12-րդ հոդվածներ	Առաջարկում ենք Օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ մասը վերանայել՝ համապատասխանեցնելով նախագծի կարգավորումներին:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագիծը լրացվել է նոր 11-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 11.** Օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «12. Էթիկայի հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումների ընդունման հիման վրա լիազոր մարմնի ղեկավարը որոշում է կայացնում տվյալ բուժաշխատողի անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ:»: Սույն լրացման արդյունքում նախագծի 11-րդ հոդվածի համարակալումը փոխվել և նոր խմբագրությամբ դարձել է 12-րդ հոդված: Միաժամանակ, նախագծի 12-րդ հոդվածը վերանայվել է՝ նախագծի հոդվածների ուժի մեջ մտնելու ժամկետների առումով:	Ընդունվել է:
31.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և	Առաջարկվում է Նախագծի 11-րդ հոդվածի (նոր շարադրությամբ 12-րդ հոդվածի) վերնագիրը խմբագրել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի 11-րդ հոդվածի (նոր շարադրությամբ 12-րդ հոդվածի) վերնագիրը	Ընդունվել է:

		լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 12-րդ հոդված	կարգավորումները:	շարադրվել է հետևյալ ձևով. «***Հոդված 12. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ»:***	
32.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-584[3]-08.05.2023-առհ-011/1) օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող 47.9.-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «մասնագիտական աշխատանքային պարտականություններ» բառերը փոխարինել «մասնագիտական գործունեություն» բառերով՝ հաշվի առնելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում ներառված այն դրույթը, ըստ որի՝ բուժաշխատողն իր գործունեությունն կարող է իրականացնել ոչ միայն աշխատանքային, այլ նաև ծառայությունների մատուցման պայմանագրերով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
33.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-584[3]-08.05.2023-առհ-011/1) օրենքի նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող 47.29 և 47.30-րդ հոդվածների համարակալումն անհրաժեշտ է փոխել՝ հաշվի առնելով ԱԺ-ի կողմից 25.10.2023թ. 2-րդ ընթերցմամբ հաստատված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» /Կ-618-20.06.2023,04.09.2023-ՊԻ-011/2ամբ./ օրենքի նախագծի կարգավորումները, քանի որ վերջինիս համաձայն, արդեն իսկ նման համարակալմամբ հոդվածներ առկա են: Բացի այդ, անհրաժեշտ է նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «հաստատություններ» բառը նշել եզակի թվով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի ողջ տեքստում «47.29» թվերը փոխարինվել են «47.33», իսկ «47.30» թվերը՝ «47.34» թվերով, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ մասում «հաստատություններ» բառը փոխարինվել է «հաստատություն» բառով:	Ընդունվել է:
34.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»	Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 47.30-րդ հոդվածի (նոր շարադրությամբ 47.33-րդ) հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը սահմանել առանձին մասերով՝ հաշվի առնելով անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիայի ուժի մեջ մտնելու	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագիծը խմբագրվել է և նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 47.30-րդ (նոր շարադրությամբ 47.33-րդ) հոդվածը շարադրվել է հետևյալ	Ընդունվել է:

		(Կ-584[3]-08.05.2023-առհ-011/1) օրենքի նախագծի 2-րդ հոդված	ժամկետները, ինչպես նաև դիսպոզիցիան խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուժաշխատողները կարող են մասնագիտական գործունեություն իրականացնել նաև քաղաքացիարավական պայմանագրերով:	խմբագրությամբ. **«Հոդված 47.34. Անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա չունեցող անձին մասնագիտական գործունեություն իրականացնել թույլատրելը** 1. Անհատական լիցենզիա չունեցող անձին մասնագիտական գործունեություն իրականացնել թույլատրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով: 2. Անցումային անհատական լիցենզիա չունեցող անձին մասնագիտական գործունեություն իրականացնել թույլատրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով: 3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով: 4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն	

				աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:»: Խմբագրման արդյունքում փոխվել է նաև հոդվածի մասերի համարակալումը:	
35.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-584³-08.05.2023-առհ-011/1) օրենքի նախագծի 4-րդ հոդված	Անհրաժեշտ է նախագծի 4-րդ հոդվածում «47.28-րդ» բառը փոխարինել «47.32-րդ» բառով, իսկ «47.29-րդ, 47.30-րդ» բառերը փոխարինել «47.33- 47.34-րդ» բառերով՝ համարակալումները համապատասխանեցնելով գործող օրենսգրքին:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
36.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-584³-08.05.2023-առհ-011/1) օրենքի նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածն առաջարկում ենք խմբագրել՝ «որն ուժի մեջ է» բառերը փոխարինելով «որոնք ուժի մեջ են» բառերով և հղումները ու ուժի մեջ մտնելու ժամկետները հստակեցնել:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի 5-րդ հոդվածը խմբագրվել է և շարադրվել հետևյալ խմբագրությամբ. «***Հոդված 5.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ՝ 1) 47.33-րդ հոդվածի 2-րդ մասի, 47.34-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից. 2) 47.33-րդ հոդվածի 1-ին մասի, 47.34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:»:	Ընդունվել է:

37.	ՀՀ կառավարություն	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-584[1]-08.05.2023-առհ 011/118.10.2023-առհ-011/1) օրենքի նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները: Ըստ այդմ, նախագծի վերնագիր խմբարվել է և շարադրվել հետևյալ խմբագրությամբ. «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ»:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
38.	ՀՀ կառավարություն	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-584[1]-08.05.2023-առհ 011/118.10.2023-առհ-011/1) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի ամբողջ տեքստում «2.8[1].», «2.8[2].» և «2.8[3].» թվերն անհրաժեշտ է փոխարինել «2.8.1.», «2.8.2.» և «2.8.3.» թվերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջները, ինչպես նաև վերանայել նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ նախագծի 2-րդ հոդվածում ուժի մեջ մտնելու ժամկետը փոփոխվել է՝ սահմանելով 2025 թվականի հուլիսի 1-ը:	Ընդունվել է:
39.	ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-5844-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով վերանայել նաև գործող օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը՝ 11-րդ կետում «արձակվելու» բառից հետո լրացնելով «, ներառյալ՝ սահմանված կարգով անհատական լիցենզիա չստանալու» բառերը:» և դրանով համապատասխանեցնել գործող օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-584-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի կարգավորումներին:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, գործող օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում «արձակվելու» բառից հետո լրացվել են «, ներառյալ՝ սահմանված կարգով անհատական լիցենզիա չստանալու» բառերը:	Ընդունվել է:
40.	ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-5844-08.05.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի 3-րդ (նոր համարակալմամբ 4-րդ) հոդված	Առաջարկվում է վերանայել նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը՝ համապատասխանեցնելով ամփոփիչ փաթեթով նախատեսված ժամկետներին:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվել 2026 թվականի հունվարի 1-ը:	Ընդունվել է:

41.	ՀՀ կառավարություն	«Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-5842-08.05.2023-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է վերանայել նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը՝ համապատասխանեցնելով ամփոփաթերթով նախատեսված ժամկետներին:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ըստ այդմ, նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվել 2025 թվականի հուլիսի 1-ը:	Ընդունվել է: